ՏԵՂԵԿԱՆՔ 1

1. Թիվ 01/02-07009/12 կատարողական վարույթի նյութերից պարզվում է, որ՝

1.1. Թիվ ԵԿԴ 2436/02/12 դատական գործով և թիվ 01/02-07009/12 կատարողական վարույթով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն մասնակից չի հանդիսանում և իրավասու չէր միջնորդել գույքն արգելանքից հանելու համար:

1.2. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն, կադաստրից ստանալով 21.05.2013թ. միասնական տեղեկանքներ այն մասին, որ թիվ ԵԿԴ 2436/02/12 դատական գործով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված 01/02-07009/12 կատարողական վարույթով 11.12.2012թ. արգելանք է դրվել/կատարող՝ Ելենա Ղուկասյան/ Ծիծեռնակաբերդի 1/3 հասցեում «Միլլար» ՍՊԸ-ին պատկանող ողջ գույքի վրա, իր անունից հանդես եկող «Ունիվերսալ Բիզնես Սոլուշնս» ընկերության ներկայացուցիչ ոմն Հովսեփ Մկրտչյանի միջոցով, ներկայացնելով կադաստրի 21.05.2013թ. միասնական տեղեկանքները, 23.05.2013թ. դիմում է 01/02-07009/12 կատարողական վարույթով հարկադիր կատարող Արսեն Ստեփանյանին և պահանջում, որ արգելանքները հանվի: Գործող օրենսդրության համաձայն, հարկադիր կատարողն, առանց համապատասխան իրավական հիմքերի, իրավասու չէ գույքն արգելանքից հանելու որոշում կայացնել, իսկ կատարողական վարույթով մասնակից չհանդիսացող անձի միջնորդությանն, ըստ էության, պետք է պատասխաներ, որ վերջինս միջնորդություններ ներկայացնելու իրավասություն չունի:

2. Կադաստրի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավար Կ.Խաչատուրյանը հանկարծ հիշում է մեկ տարի վաղեմության արգելանքի որոշման պահանջը չկատարման մասին և իր 17.06.2013թ. գրությամբ հարկադիր կատարող Արսեն Ստեփանյանին հայտնում է, որ՝ նախկինում ավարտված գործով (խոսքը թիվ ԵԿԴ/1439/02/12 քաղաքացիական գործի մասին է, որով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն մասնակից չի հանդիսացել) 09/07/2012թ. արգելանքներ է կիրառվել Ծիծեռնակաբերդի 1/3 հասցեի վրա և այդ վարույթով ԴԱՀԿ-ի 19/09/2012թ. որոշմամբ արգելանքները վերացվել է, բայց սխալմամբ նախկինում արգելանքները չի կիրառել, հիմա. խնդրում է հայտնել՝ կիրառել արգելանքը նշված հասցեի նկատմամբ թե»:
Առաջին հայացքից սա կատարյալ անհեթեթ գրություն է, քանի որ նախ՝ եթե այդ վարույթով 19/09/2012թ. որոշմամբ արգելանքները վերացվել է, ապա՝ պարոն Խաչատուրյանը ինչու պետք է հիշատակեր այդ խախտման մասին, մանավանդ, որ ՀՀ քր.օր հոդվածով 353-ով նման արարքի համար քրեական պատասխանատվություն է նախատեսված: Բացի այդ՝ եթե անգամ հարկադիր կատարողը պատասխաներ՝ «պետք է կիրառել արգելանք», ապա՝ կադաստրը հարկադիր կատարողի այդ պատասխանի հիման վրա իրավական ինչ” հիմքով կարող է արգելանք կիրառել այդ ավարտված վարույթով:
Ի վերջո այդ գրությունն ինչպես և ինչ նպատակով է հայտնվել այդ գործի հետ որևէ առնչություն չունեցող թիվ ԵԿԴ 2436/02/12 դատական գործով թիվ 01/02-07009/12 կատարողական վարույթում:

3. Ինչևէ հարկադիր կատարողն իր 21.06.2013թ. գրությամբ պարոն Խաչատուրյանին պատասխանում է, որ՝ «խնդրում եմ արգելանք չկիրառել» ու այդ պատասխանը, որն ուղղված է կադաստրին, ստորագրությամբ առձեռն տրամադրում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Մկրտչյանին:
Հարց է ծագում, թե՝ ով է բանկի ներկայացուցիչ Հ.Մկրտչյանը, որ 2012թ.-ին ավարտված ինչ-որ կատարողական վարույթի հետ կապված ԴԱՀԿ-ի ու կադաստրի 2013թ. հունիսի գրությունն առձեռն ստանա ու փոխանցի հասցեատիրոջը՝ փոստատարի դեր կատարի:
Սակայն հետագայում պարզվում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (ներկայացուցիչ Հ.Մկրտչյանի) կապն ու շահագրգռվածությունը ԴԱՀԿ-ի ու կադաստրի գրությունների փոխանցման հետ կապված: Մասնավորապես, հարկադիր կատարողի 21.06.2013թ. գրությունից մի քանի օր անց՝ 28.06.2013թ. Ծիծեռնակաբերդի 1/3 հասցեի արգելանքները վերանում են և սկսվում է «Միլլար» ՍՊԸ-ի անվամբ գրանցված մոտ 5.000.000 ԱՄՆ դոլար արժեքով 4700քմ տարածքների մասայական բռնագանձումը՝ անվանափոխումը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն անվամբ: Այսինքն՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի, կադաստրի և ԴԱՀԿ-ի ապօրինի համագործակցության արդյունքում «Միլլար» ՍՊԸ-ի անշարժ գույքն ապօրինաբար անցել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին: